Արձանագրություն 4

«ՀՀԿԳՆԳՀԾՁԲ-19/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգով համակարգչային սարքերի պահպանման և վերանորոգման ծառայությունների գնման գործընթացի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան

12.04.19թ.
ժ.11:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Մ. Կարախանյան /գնահատող/
Հանձնաժողովի անդամ՝ Ա. Խաչատրյան /գնահատող/
Ա. Ադամյան /գնահատող/
Հ. Գրիգորյան /բացող/
Մ. Պողոսյան /բացող/
Հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Մարգարյան

1. Պայմանագիր կնքելու իրավունքից զրկելու մասին
(Մ. Կարախանյան)

1.1 Արձանագրել, որ մինչ օրս <<Սերվիս Պլյուս>> ՍՊԸ-ի կողմից չի ներկայացվել իր կողմից ստորագրված պայմանագիրը և պայմանագրի ապահովումը, այն դեպքում երբ պայմանագրի նախագիծն ու պայմանագիր կնքելու մասին ծանուցումը վերջինիս տրամադրվել է 28.03.2019թ: Հիմք ընդունելով <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ կետը՝ <<Եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնում պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրն ստորագրելու իրավունքից>> և, հաշվի առնելով, որ լրացել է <<Սերվիս Պլյուս>> ՍՊԸ-ի կողմից ստորագրված պայմանագիրը և համապատասխան պայմանագրի կատարման ապահովումը ներկայացնելու համար սահմանված ժամկետը՝ <<Սերվիս Պլյուս>> ՍՊԸ-ն զրկվում է նշված պայմանագիրը ստորագրելու իրավունքից:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

1.2 Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ թիվ 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի 45-րդ կետը՝ <<Սերվիս Պլյուս>> ՍՊԸ-ի տվյալները, ներառյալ համապատասխան հիմքերը, ներկայացնել ՀՀ ֆինանսների նախարարություն՝ վերջինիս գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով, հաշվի առնելով, որ առկա են <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի 6-րդ ենթակետի ա/ և բ/ մասերով նախատեսված հիմքերը:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

2. Գնման գործընթացը շարունակելու մասին
(Մ. Կարախանյան)

2.1 Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ թիվ 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի 49-րդ կետը և նույն կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետը հարցում ներկայացնել երկրորդ տեղ զբաղեցրած մասնակցի՝ Անուշ Պետրոսյան Ա/Ձ-ի հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների առկայության վերաբերյալ:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

2.3 Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել Անուշ Պետրոսյան Ա/Ձ-ի համար ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից համապատասխան

եզրակացությունը ստանալուց հետո՝ հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում, ժամը 10:00-ին, ք. Երևան, Կառավարական տուն 2, 303 սենյակ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

Գնահատող հանձնաժողով՝

---------- Մ. Կարախանյան /նախագահ/

---------- Ա. Խաչատրյան

---------- Ա. Ադամյան

---------- Հ. Գրիգորյան

---------- Մ. Պողոսյան

---------- Ա. Մարգարյան /քարտուղար/